

ՀԱՇԱԿ ՈՍԿԵՂԷՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ԱՅԼՈՎԲՆ ՀԱՆԴԵՐՁ

ԸՆԴ ԽՆԱՄՈՎ

Ա. ՄԱՏԱԹԻԱՅ ԳԱՐԱԳԱՅԵԱՆ ԵՒ Յ. ԳՈՒՐԳԵՆԻ

ՏԱՐԻ Բ.

ԹԻԻ Դ. — 1 ԱՊՐԻԼ



Ի Կ. ՊՈԼԻՍ

ԱՌ ՅՈՎՍԵՓԱՅ ԳԱՎԱՅԵԱՆ

1887

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



ՊԵՏԱԿԱՆ

Պատմութիւն Հայ մատենագրութեան Ս. Մ. Գ.
Գիւտ եւ ազդեցութիւն արուեստի տպագրութեան . Ս. Մ. Գ.



ԲՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի Գրոց Տէյեմաքայ Ս. Գ.
Թուղթ առ Խնամակալութիւն Ս. Գ.
Շուն Ս. Մ. Գ.
Առանձինն բանք Հայերէն լեզուի (Գ.) Յ. Գ.



ՃԱՇԱԿ

ՌԱՍԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ

ՀԱՅ ՄԱՏՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ի ՍԿՋԲԱՆԷ ԱՆՏԻ ՄԻՆՁԵՒ ՅԱՌԱՋԻՆ ԿԷՍ ԱՆԴՐ Ե. ԴԱՐՈՒ

Այժմ դժուարին ինչ, և ոչ գործ մեծի հմտութեան, տեսանել զանբան և զանչափ առաւելութիւն որ կայ ի մէջ լեզուի այսր ազնուագոյն ժամանակի և ի մէջ լեզուին յաջորդ դարուց: Աւելորդ է սակայն խօսել զայսմանէ այլ եւս երկարագոյնս: Քան զվարդապետութիւն ազգոյ է օրինակն: Ի գործոց անտի Ոսկեղէն դարու մնացորդք որ հասին առ մեզ՝ են,

Ա. Ե՛ւ մեծութեամբ եւ պատուով առաջին՝ աստուածաշունչ մատեանն Հին և Նոր կտակարանաց (բայ ի գրոց Յայտնութեան,) թարգմանեալ առաջնորդութեամբ և գործակցութեամբ իսկ Մեծին Սահակայ և Մեսրոպայ, իբրեւ արդարեւ հարց և վարդապետաց հայերէն դպրութեան, որպէս վկայենն Կորիւն, ժամանակակից և միջամուխ, և Մովսէս Խորենացի, ոչ կարի հեռի ժամանակաւ: Կորիւն զՄեսրոպայ դրէ օրինակ զայս. «Որով (այսինքն ի ձեռն Հռովմանոսի) զամենայն ընտրութիւնս նշանագրոյն, զնրբագոյնսն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ՝ ի թարգմանութիւն դառնայր հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յեկեղեաց գաւառէն, և երկրորդին՝ Յովսէփ անուն ի պաղանական տանէն, և եղեալ սկիզբն նախ յառակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեան ընծայեցուցանէ ինեւ ասելով՝ եթէ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ:»

Նւ այլուր ասէ նոյն պատմիչ զՍահակայ . « Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ (ի) յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ . . . դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Նզնկաւ զյառաջագոյն զյանկարծագլխաւ զփութանակի զթարգմանութիւնն հաստատէր ձեմարիտ օրինակօք բերելովք » (կորիւն) : Գրեթէ զնոյն օրինակ խորենացին : Յետ պատմելոյ զգլխաւ նշանադրոյն պէս գունակ կորեան , « Հանդերձ Հռոփանոսիւ կերպածեալ զգիրն առ ձեռն պատրաստ , փոխադրելով զհայերէն աթուրթայսն ըստ անսայթաքութեան սիւղորայից Հելլենացոց , » յարէ ի նոյն . « Նւ իսկոյն ի թարգմանութիւն ձեռնարկեալ , խորհրդաբար սկսանելով յԱռակաց , բովանդակ զքստան և երկու յայտնիսս և զնոր կտակս յեղուլ ի հայ բան , նաև աշակերտք նորա Յովհան եկեղեցացին և Յովսէփ պաղնացի » (խոր. Գ. ԾԳ.) . և այլուր (Գ. ԿԱ.) . « Ապա եկեալ թարգմանիչքն մեր զորոց անուանան յիշատակեցաք յառաջագոյն , դաին զՄեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ , և մատուցին զթուղթսն և զկանոնս ժողովոյն Նփեսոսի . . . և զստոյգ օրինակս Գրոց : Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ , դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն փութանակի , հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ : »

Զլեզուէն թարգմանութեան Գրոյն սյսջալի ինչ լիցի ասել թէ զոր օրինակ հմուտքն և ձեռնհասք յեւրոպայի քննչաց իսկ կոչեցին զթարգմանութիւն մեր « թագուհի թարգմանութեանց » վասն ձեզութեանն և հմտութեան , նոյնպէս պարտ և պատշաճ է վասն յստակութեանն և գեղեցիկութեան լեզուին անուանել զնա զլուս և պսակ դըպրութեան Հայ լեզուի : Գիտել արժան է սակայն զի բուն կանոնական գիրք , որպիսի են , ըստ եկեղեցական աւանդութեան , Հնգամատեանն , Յետու , Դատաւորք , Հռութ , Թագաւորք և Մնացորդք , ստիւքերոնքն Յօր , Սաղմոսք , Գիրք Առակաց , Ժողովողի և Նրգոց երգոյն , Մարգարէք , Նէեմի , Նզրաս և Նսթեր , որպէս և Նոր կտակարանն բովանդակ , են թարգմանեալ խնամով բան առ բան , մինչ ի մաստութիւնն և Մակարայեցիք են ազատ թարգմանութիւն ,

յորս թարգմանիչն , առ ի ցոյցս իւրոյ հմտութեանն ի Հայ լեզուի , Զնայ հնարի հեղուլ զեզուլ զամենայն զարդս լեզուին , որպէս թէ զՀոմերոս և զՀերոդոտոս թարգմանիցէ :

Բ. Յետ Գրոյն երկրորդ են , ոչ ըստ առաւելութեան լեզուին , այլ կարգաւ , թարգմանութիւնք գործոց Յովհաննու Ոսկեբերանի , հօրադուռնին բանիւ և գրով ի հարս Նկեղեցւոյ , և են՝ մեկնութիւն աւետարանին Մատթէի , Նսայեայ , մեկնութիւն թղթոցն Պաւղոսի , յորմէ հատակոտորք ոչ սակաւ կան , և ճառք ինչ որոց լեզուն յայտ առնէ լինել գործ Ոսկեղէն դարու : Թարգմանութիւն գործոց Ոսկեբերանի որ արդ յիշեցան՝ է , ըստ վայելուչն սարգուլթեան և ճշգութեան լեզուին , հանգոյն և հաւասար թարգմանութեան Գրոցն . այլ ըստ առատութեանն և գեղեցկութեան լեզուի , մանաւանդ ի յորդորական , է չքնալ և անհամեմատ : Իցիւ , հաճեալ էր թարգմանչին տալ մեզ զՀոմերոս կամ զայլ ոք ի պոետից Յունաց կամ ի ճարտարաց Հռոմայեցւոց , և կամ մանաւանդ յանձնէ իսկ ճարտարէր նոյնպիսի ինչ և նոյնգունակ :

Գ. Զինի թարգմանութեան գործոց Ոսկեբերանի , երրորդ են , նոյնպէս կարգաւ , ճառք ուրումն Սեբերիանոսի եմեսացւոյ , ամենեւին նոյն , ըստ ոճոյն և ընտրութեան լեզուի , ընդ մեկնութեան Մատթէի և թղթոցն Պաւղոսի :

Դ. Զթուի ամենեւին օտար ի լեզուէ անտի թարգմանութեան գործոց Ոսկեբերանի և Սեբերիանու՝ լեզուն թարգմանութեան Քրոնիկոնին Նւսեբեայ կեսարացւոյ : Այսր մատենի առաւելութիւն յայնմ է մանաւանդ , զի նիւթն արտաքին է և ոչ սոսկ եկեղեցական :

Ե. Թարգմանութիւն վեցօրեայ արարչութեան գրոց Իարտղի կեսարացւոյ , ըստ ոճոյն այլ ի չորից անտի , ըստ ընտրութեանն սակայն ամենեւին նոյն , նա՝ ըստ մեծութեանն և առատութեան թերեւս զանցանէ իսկ զնոքօք : Զլեզուի սորա զնմանութիւն բերէ ոճ թարգմանութեան մեկնութեանն Յովհաննու աւետարանին յՈսկեբերանէ յառաջին երեքտասան ճառսն . մնացեալն , կամ թերի թողեալ և կամ կորուսեալ , թարգմանեցաւ աստ ուրեմն առ վկայասիրիւ ոչ

յանհմուտ գրչէ , այլ ոչ ըստ լեզուի Ոսկեղէն դարուն հայ դպրութեան :

Զ. Վեցերորդ. մնացորդ ի դարէ անտի է մատեանն ա- նուանեալ Կոչումն ընծայութեան , այն է՝ մեկնութիւն հան- քանակի վասն երախայից ի Կիւրդէ երուսաղեմացւոյ , դար- ձեալ այլ ոճ , և դարձեալ նոյնպէս և նոյնչափ ընտիր որ- չափ առաջինքն . եթէ ընտրի եւս ի նոցանէ , ընտրի փափ- կութեամբն և քաղցրութեամբ մեղմ և հանդարտ ոճոյն : Ոչ սակաւ նմանութիւն թուի ունել ընդ սմա ըստ ոճոյն թարգ- մանութիւն միոյ ի գործոց Եւագրի պոնտացւոյ :

Է. Եօթներորդ. թարգմանութիւն գործոց Կիւրդի աղեք- սանդրացւոյ , այն է՝ մեկնութիւն Հնգամատենին , որպէս և Թաղաւորացն և Մնացորդաց , անխառն հայերէն հանդոյն և հաւասար թարգմանութեան գործոց Ոսկեբերանի : Նշմարել նշմարի և ի սմա այլակերպութիւն ոճոյ ի նկարագրելոց ան- տի մինչև ցարդ , այլ ըստ հանգամանաց լեզուի ժամանակին ոչինչ իւրիք օտար ի նոցանէ :

Ը. Ութերորդ. Զգօնն անուանեալ մատեան , որ ունի ճառս ի Սրբոյն Յակոբայ մծբնացւոյ , արարեալ որպէս թէ ի խնդրոյ Լուսաւորչին մերոյ ըստ աւանդութեան . չիք սակայն տարակոյս թէ է թարգմանութիւնն գործ հինգե- րորդ դարու , զի ունի զդրոշմ այնր ժամանակի , և որպէս հաւանութեան է ի յօրինուածոյ լեզուին և ի կարգէ բանիցն՝ յԱսորի բարբառոյ : Զնոյն օրինակ ասացուածոյ ունին և Եփրեմայ ասորւոյ մեկնութիւնք Մենդոց , Ելից , այլովքն հանդերձ , մինչև ի Մնացորդս , և Եւսեբեայ կեսարացւոյ պատմութիւն Եկեղեցւոյ , « զոր ետ թարգմանել երանելի վարդապետն Մաշթոց ի Հայ լեզու , » որպէս ասէ Խորենա- ցի : Երեքին եւս թարգմանեալք թերեւս յԱսորի լեզուէ , ցուցանեն արդարեւ երեւելի խտիր յայլոցն որ ցարդ յիշե- ցան , առանց սակայն փոքու իւրիք նուագելոյ յընտրութե- նէ և յայլոց եւս առաւելութեանց նոցա :

Որ յիշեցանն ցարդ իբրեւ անգին նշխարք յազնուագոյն ժամանակէ Հայ լեզուին , արդարեւ ի մեծ աւերածոյ և իբրեւ յանհնարին հրդեհէ ապրեալք , են համակ թարգմանութիւնք ,

բայց և յայն սակս մանաւանդ պատուականք , զի դէւրաւ մարթ է մեզ ի համեմատութենէ նոցա ընդ մայր լեզուին որ է մեծաւ մասամբ յոյնն՝ լինել խեղամուտ ոչ գաղտնեաց լեզուին միայն որ բազմադիմին է , այլ և մեծի և անհամեմատ հանճարոյն և արուեստի թարգմանչացն , հանդերձ այսու և ընտրել գյատակն ի պղտորէն , զբունն յեկամոնն սպրդելոյ յընթացս խոնարհագոյն դարուց : — Եկեացուք այժմ ի սակաւսն որ ողջոյն իսկ և կամ կիսով միայն են բնագիր :

Առաջին ի սոսա փայլէ գոյիւ իւրով Նզնիկ, որոյ առաւելութիւնն ոչ յայնմ միայն է՝ զի է ծնունդ մտաց մատենագրին և ոչ թարգմանութիւն, այլ զի և քրիստոնէական ողջմտութեամբ իւրոյ ժամանակին խօսի համակ զիլիխոսփայական խնդրոց փիլիսոփայական ոճով հաւասար հռչակաւորագունից ի հարց Յոյն եկեղեցւոյ, Բարսղի, Ոսկեբերանի, Կիւր-զի, ոչ խորելով ինչ զնոցայն, այլ յանձնէ մանաւանդ ճարտարելով, ցուցեալ առյապա եկելոյ՝ թէ քաջ ի բաց հնար է և Հայոյն իմաստասիրել հայերէն։ Միով բանիւ Նզնկայ մատենիկն, ի մէջ ոչ դոյզն մնացորդաց Ոսկեղէն դարու հոյակապ մատենագրութեան, մի միայն գիտնարար մատեան է։ Առ ի ցուցանել զամբաւ առաւելութիւն Նզնկայ իբր հրաշակերտ Հայ լեզուի, շատ և բաւական լիցի ասել՝ թէ արժանի է այն մատեան ի բերան ուսանելոյ ամենայն հայերենագիտաց։ Նզնիկ ոչ գրէ միայն հայերէն, այլ և ուսուցանէ հայերէն։ Ստէպ տալով զնոյն միտս այլով բանիւ, որպէս պարսկէ և խորթիկէ, հրաման և օճան, Կարօտի և արտաքիւն, կամ չարելով զմիմեանց հակառակս, որպէս Կապուր և Դաւան, Կապուր և Լուսի, Դրաց Կոշի և Կուր Կոշի, անսպառ պէսպիսութեան Հայ լեզուին տալ մեզ հասու լինել։ Միով բանիւ չիք յնզնիկն տող որ չիցէ արժանի առանձինն մտադրութեան, և ոչ էջ՝ ուր չգուցէ բազում ինչ նոր և պիտանի, եւ բան եւ ասացուած։

(Մատոհուցի յառաջ)

U. U. T.

ԳԻԻՏ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ⁽¹⁾

Բեմն առ ժամանակ մի եւս , յետ գիւտի տպագրութեան , որպէս գիւրին է իմանալ հայեցեալ ի զօրութիւն նորա և արտաքին պայմանաց որ նպաստաւորն էին նմա , կարաց ունել յաջողութեամբ գդէմ գուպարածի մամլոյն : Ստոյգ իմն էր սակայն թէ հոսկ ուրեմն վերջինս այս տանելոց էր ի գլուխ զյաղթութիւնն : Եթէ ուսումն և կրթութիւն յընթերցուածոյ գրոց որ արգասիք են մամլոյ՝ չէ ամենեւին առանց անպատեհութեան , ունի սակայն և ոչ սակաւ շահ օգտի յորմէ անմասն է կրթութիւնն ի բեմէ միայն : Նշանանադիրք յորոց յօդեալ կան էջք մատենից՝ են արգարեւ համր և անմասն յազգեցութենէն զոր սովոր է գործել կենդանի բարբառն ի միտս լսողաց , զարմանալի է սակայն զի նշանադիրքն այնոքիկ անշունչք և անմունք են այնպէս իմն բանիբունք և խօսօղք , մինչեւ տալ ոգւոց մերոց բազում անգամ ի վեր վազել ընդոստ , և երեսաց մերոց շառագունել յամօթոյ և ի սլատկառանաց : Զօրութիւնն ածելոյ ի հաւան չէ յօդապատ բանից թրթրակ լեզուի միայն սեպհական . հզօրադոյն բազում անգամ լուռլուռն է : Աստուած ի վեր է ի յօդապատ բանից . ապաքէն խօսել խօսի նա ի սիրտ , այլ ոչ երբեք բանիւք յօդելովք :

Գոյ և այլ պատճառ որ ցուցանէ թէ ընթեռնլովն ուսանել՝ առաւել է քան զուսանելն ի լրոյ եւեթ : Յիրս իսկ որ սովորական են ի հասարակաց կեանս՝ ո՛րչափ մեծ խտիր կայ ի միջի , յորժամ այլ ոք առնիցէ ինչ վասն մեր , և յորժամ մեքս առնիցեմք զնոյն անձամբ անձին : Ո՛չ ապաքէն ի գործել մեր մեզէն առնիմք զգուշագոյնք , ուշ ի կուրծս , և աւելի մոտադիւրք : Ասելն չառնէ զմիտս այնպէս գործօն և և խուզակ որպէս ընթեռնուին . ընտրելի է ապաքէն վերջինս այս պայման ի խելամոտել մանր և գտակաւ :

Ի պատճառաց աստի և յայլոց եւս որ սոցին սակի են , գիւրին էր ապաքէն գուշակել անդէն ի սկզբանն եթէ , կա-

(1) Տես զթիւ Բ.

նուխ կամ անագան, հասանելոյ էր մամլոյ յինքն վտարել զաւագութիւն բեմին, ունել զնորա տեղին կամ առնել զնա երկրորդ իւր, և թէ գալոյ էր օր զի քարոզութիւնն, ընդ հենդն իմն բանիրուն ջանից արանց ճամարտից և յաջողագունից, ունէր կորուսանել զիւր ազդեցութիւն ի վերայ խառնադանձ մարդկան և դադարել յուղղելոյ զհասարակաց կարծիս, գործք՝ զորս մնայր կատարել լրագրաց:

Աշխարհական իշխանութիւնն , որպէս և եկեղեցականն ,
զգաց զսգգեցողութիւն մեծի փոփոխութեանն որ ի լինել էր :
Յաւուրս պատերազմին որ յամին 1563 ընդդէմ արեւելեայց՝
լրագիրք երեւեցան զառաջինն ի վենետիս , և էին յայնժամ
ձեռնագիր : Լրագիրն անուանեալ Կալէթ Կը ֆրանս առ սկիզբն
յամէ անտի 1631 :

Գոյ ոչ սակաւ կասկած տարակուսի զվաւերականութե-
նէ առաջին անդղիական թերթից որ կարծին ածեալ ի լոյս
ի խռովայոյղ ժամանակի անդ սղանիական Արմադային (1588)
և որոց օրինակքն պահին զգուշութեամբ ի բրիտանական Մու-
սէնին : Լրագիրք գտին արդեամբ Հաստատութիւն յԱն-
գղիա, Հերմէս, Լուրք, և այլ պէսպէս անուամբք, ի ժա-
մանակի անդ քաղաքային պատերազմաց (1461-1485) :

Ձոր ինչ ասացաքս զապգեցուծեանէ մամուլոյն ի վրայ կրօնական կենաց մարդկան՝ իմանալի է և զքաղաքային կենաց։ Արուեստ ատենախօսուծեան անկանէր ի բարձրութենէն ուր կայրն, և թուէր իմն օրըստօրէ տալ տեղի լրագրութեան արուեստին։ Արշալի սքանչելի և իցէ ազգեցուծիւն արուեստին ատենախօսուծեան յաստարիզի անդ իւրում, է, ի բնէ իւրմէ և ի պայմանաց յորս գտանի յաճախ, ընդ սահմանաւ, և ամենեւին անբաւական ի գործել ի վերայ համօրէն դասուց ժողովրդեան, որպէս պահանջի զարդիս։ Առանց լրագրի զինքն ինքնին արդասիւք բանիբուն ճառից որ խօսին յատենի խորհրդանոցաց։ Լրագիրն է արդարեւ որ տայ ճառից խորհրդանոցաց զազգեցուծիւնն զոր ունին յիւրեանց կէտ նպատակի։ Վի լրագիրն է որ տայ նոցա ելանել յանձուկ չրջանէ անտի ունկնդրաց կրթելոց, և սերմանէ զնոսա յամենեցուն միտս, եւս և սակաւուսումն մարդոց, նաև անուամանց իսկ։

և զտկար ձայն ատենախօսին որ չիչխէ հնչել անդր քան զսրահըն՝ դռնչեցուցանէ յականջս համօրէն աշխարհի, հեռաւորաց և մերձաւորաց միանգամայն :

Այսպէս, մինչ յառաջ քան զգլխո տպագրութեանն բեմն էր միջնորդ մտաւորն զարգացման ժողովրդոց և՛ ի հոգեւորն և՛ ի մարմնաւորս, յետ գլխտին ազդեցութիւնն այն գամ քան զգամ անցանէր մամլոյն, որ այժմ վճարէ գրեթէ ուրոյն առանձինն զգործն զայն զմեծ և զկարեւոր թէ՛ գրովք և թէ՛ լրագրութեամբ :

Ի դէպ է աստ ասել ինչ համառօտիւ և զգտանելոյ մուտ արուեստին տպագրութեան ի մեղ : Ազգի և ժողովրդեան որ ի բնէ ցանկացօղ է նմանել այլոց, որպիսի մերազգեաց ժողովուրդս է, գրեթէ անհնար էր մնալ անմասն յօգտակարութենէ անտի, որում արար հաղորդս տպագրութիւնն զգլխաւորս ազգաց Եւրոպայ ի հարիւրամեայ ժամանակի անդ յետ գլխտին : Զէ դոյզն ինչ արդարեւ վասն Հայոց, ի մէջ այնչափ արեւելեան ժողովրդոց, յորոց չառք հզօրագոյն էին քան զնա իշխանութեամբ, որպէս և թուով և մեծութեամբ, լինել առաջին յունել առանձինն տպագրութիւն անդէն իսկ ի կատարածի այնր հարիւրամեայն ժամանակի : Արդարեւ ըստ ստուգագոյն աւանդութեան երեւել հայ մամլոյն չանցանէ այսր քան զամն 1567 : Յաւուրս կաթողիկոսութեան Միքայելի (1547-1556) և պատրիարքութեան Կոստանդնուպոլսոյ Յակոբայ Ա. ոյ (1563-1573) Աբգար ոմն Եւդոկիացի լինէր առաջին, որ այլովք ընկերօք ոմամբք յօրինեալ նշանագիրս մետաղեայս ի Հռոմ, և ապա եկեալ յարեւելս՝ տպագրէր ի Կոստանդնուպոլիս (1567 և 1568) այբբենարան և տօնացոյց : Զսորա (գլխգարու) գհետ չոքան Յովհաննէս ոմն տէրղնցի, որ ի խնդրոյ վաճառականաց ոմանց հայոց նորոգ նշանագրօք տպագրէր սաղմոսարան (1587) : Այս ի ժ. Դարուն : Փորձք ի սկզբան անդ ժ. Դարուն ի Լէմպէրկ, ի Մեդիօլան (1624) և ի Բարիզ (1616)՝ չեղեն ոչ մեծ ինչ և ոչ տեւական : Յետ իբր եօթանասուն ամաց (1642) փորձոյն Աբգարու, ի կաթողիկոսութեան Փիլիպպոսի (1633-1655) և նորին իսկ թեւադրութեամբ, Յովհաննէս ոմն

Անկիւրացի տայր յօրինել ի Հռոմ արուեստագիտաց Իտալացւոց տիպս հայերէն նշանագրաց , գեղեցիկագոյնս քան զԱբգարուն և զայլոցն որ յառաջ և յետոյ քան զնա , և տպագրէր ի Հռոմ , և ապա ի Վենետիս , պատարագամատոյց երկրջեան հայերէն և լատիներէն , ապա զՍաղմոսսն և զանունեալն Յիսուս որդի Շնորհաւոյն :

Ի նմին իսկ ամի (1642.) յորում Յովհաննէսն տայր տպագրել զիւր առաջին մատեանն ի Հռոմ , վարդապետ ոմն կեսարացի Խաչատուր անուն , առաջնորդ վանացն որ ի Զուղա՝ նորովք տպօք յօրինելովք ի Սպահան սկսանէր ընծայել ի լոյս եկեղեցական մատեանս , զգամագիրսն ատենի հանդերձ Սաղմոսիւք և տօնացուցիւ և քաղուածովք օրհնութեան . ապա և զվարս հարանց և զայլ եւս գրեան : Եւ զի չէր Խաչատուր քաջ տեղեակ արուեստին , Յովհաննէս վարդապետ ոմն ի վանականաց տնաի Խաչատրոյ առաքէր յԵւրոպա : Եկեալ նորա ի Վենետիս՝ տեղեկանայր արուեստին , և ապա երթեալ ի Հռոմ՝ տայր ձուլել նշանագիրս , և յետ վարելոյ նոքօք ի Լիւովոնոյ առաւել քան զամս երիս , դառնայր այսրէն ի Զուղա (1644.) այլ չգտանէր քաջալերութիւն , և գործն խափանէր մահուամբ նորա : — Այլ դարձցուք անգրէն ի պատմութիւն անդր Անկիւրացւոյն :

(//Մատոռցի յառաջ)

Ա. Մ. Գ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի ԳՐՈՑ ՏԵԼԵՄԱՔԱՅ (1)

Յետ այսց բանից , յաւել կալիփոյ տակաւին ճառս երկայնաձիգս ի մէջ բերել առ ի հաւանեցուցանել զՏելեմաք եթէ ամենեւին բարեկեցիկ , ամենեւին զուարթ և երջանիկ էր Ոգիսեւս , մինչ առ նմայն էր : Պատմէր նմա զգէպսն որ դիպեցան նմա ի քարանձաւին Սիկրոպայ Պոլիմենի և առ արքային Լիստրիկոնաց , Անտիպաթեայ . նա և զգէպսն որ պատահեցին նմա ի կղզւոջ անդ Կիրկեայ , դատեր Արեգական , ոչ մոռացաւ պատմել նմա , և ոչ զվիշտս վտանգին դիպե-

(1) Տես զթիւ Ա.

լոյ ընդ մէջ Սկիւլայ և Քարիբդէի: Նկարէր յանդիման առնէր նմա և գլխաւին միրիկն սաստիկ զոր յարոյց Պոսիդոն ընդդէմ նորա, յորժամ մեկնէրն ի նմանէ: Վայրապար իմն հաւատացուցանել կամէր՝ թէ Ուղիսեւս կորուսեալ է ի փութորկէ անտի. սակայն գէջն նորա ի կղզի անդր Տէակեանց ամենեւին իսկ լռեալ զեղջէր:

Տելեմաք որ ի սկզբան անդ պատրեալ ի մեծասպաս մեծաշուք փառաւորութենէ անտի որով պատուեաց զնա Ալալիփոյ՝ այնչափ դիւրագոյնս ետ զանձն յուրախութիւնս և ի զբօսանս, յետոյ ուրեմն ծանեաւ զհնարս նենգութեան նորա և քաջ խելամուտ եղեւ իմաստութեան խրատուցն զոր տայր նմա Մենտոր: Սակաւ իմն բանիւք ետ նմա պատասխանի պէս զայս օրինակ. Ներեա ինձ, ո՞վ Ղիւցակիրնդ, վասն թախծութեան երեսաց իմոց. ինձ չէ հնար այժմիկ չսգալ և չարտմել. թերեւս յետ այսորիկ եկեսցէ յիս զօրութիւն վայելելոյ յերախտիս և ի բարութիւնս զոր կամիս պարգեւել ինձ. բայց ի ժամուս աստ յայսմիկ թոյլ տուր ինձ լալ զհայրն իմ. դու քան զիս եւս քաջ գիտես՝ թէ որչափ արժանի էր նա ողբոց և լալեաց:

Ալալիփոյ ոչ եւս ժտէր ստիպել զնա և տռնել բռնութիւն. մանաւանդ թէ և վշտակից նորա վշտաց զանձն ցուցանէր և խանդաղատեալ լայր իսկ ի վերայ Ուղիսեայ: Յուզէր որոնէր ի միտս իւր գտանել ինչ հնարս առ յինքն գրաւելոյ զսիրտ պատանւոյն. խնդրէր ի նմանէ պատմել՝ թէ զիմրդ և որպէս նաւակոծ եղեւ, և թէ որպիսի՞ ինչ դէպքն էին որ առեալ ածին ընկեցին զնա ի վերայ ափանց կղզւոյն: Յոյժ երկար է, ասէ պատանին, պատմութիւն աղետոյ իմոց: Ո՛չ, ոչ, ասէ Ալալիփոյ, ես կարի անձկացեալ եմ հասու լինել կալ ի վերայ պատահարացն որ պատահեցին քեզ. արդ, փութա պատմել ինձ զայդ ամենայն. և բռնացեալ ճեպէր ստիպէր զնա: Յայնժամ Տելեմաք ոչ եւս կարացեալ լինել զիմադարձ՝ սկսաւ խօսել ընդ նմա օրինակ զայս:

Մեկնեալ յիթակեայ երթայի ի խնդիր այլոցն ի թագաւորաց որ դարձեալ էին ի պաշարմանէ անտի քաղաքին Տրոփացւոց՝ առ ի հարցանել զողջունէ հօր իմոյ: Խռովեալ յա-

սուշ կրթեալ զարմանային հոմանիք Պենեւոպեայ , մօր իմոյ ,
 ընդ անկարծ երթն իմ զոր թաքուցեալ էի ի նոցանէ վասն
 անազորոյն մտաց և անդգամութեան նոցա : Ո՛չ Նեստոր զոր
 տեսի ի Պիւլոս , և ոչ որ ընկալաւն զիս ի Նակեդեմոն , Մե-
 նելաոս , կարացին ինչ տեղեկացուցանել զիս եթէ տակաւին
 կենդանի^օ էր հայրն իմ : Խոնջեալ տաղտկացեալ ի կալոյ հա-
 նապալ ի վարանի և ի տատամութեան՝ եղի ի մօր երթալ
 ի Սիկիլիա , ուր՝ համբաւ էր թէ անկաւ հայր իմ՝ վարեալ
 ի հողմոյ մրրկաց : Սակայն այրդ խնաստուն , Մենտոր , զոր
 տեսանես աստ , եկաց ինձ հակառակ և արգելուլ կամէր յոր
 ինչ ես յախուռն մտարերէի ձեռնամուխ լինել : Նկարեաց
 յանդիման արար ինձ ի միոյ կուսէ զԼիկղոպայսն , հակալս
 անարիս , անհեղեղս և մարդակերս և ի միւսոյ կողմանէ
 զտորմիլ նաւացն զՆնեայ և զՏրովացւոց , որ թափառէին յա-
 փունսն յայնոսիկ : Քինացեալ են , ասէ , Տրովացիք ընդ Յոյնո
 ամենեսին և կարի յօժար են և կազմ ի հեղուլ զարիւն զոր-
 դւոյն Ողիսեայ . դարձ , գնա դու յիթակէ . գուցէ հայր քո ,
 որ այնչափ սիրելի դիցն է , անդէն զհետ քո ժամանեացէ
 անդր : Սակայն եթէ սահմանեալ իցեն երբեք Դիք զկորուստ
 նորա և թէ չէ՝ նա տեսանելոց զերկիր իւր հայրենի միւսան-
 գամ , գոնեա՞ դու գնա՞լիր անդր , առնուլ վրէժս և զեր-
 ծուցանել զմայր քո , և տալ զհանդէս խնաստութեան և
 հանճարոյ քո համօրէն ամենայն աշխարհի , և Յոյնք տեսցեն
 առ հասարակ յանձին քում թագաւոր արժանի տիրելոյ նո-
 ցա , որպէս էր հայր քո Ողիսեաս :

Շահաւոր էին բանքս այսոքիկ , սակայն ես չէի ինչ
 զգաստ և խնաստուն առ ի լսել խրատուց նորա . այնմ եւեթ
 ուշ ունէի՝ թէ զխորդ յազեցուցանիցեմ զտենջանս իմ : Ո՛յն-
 չափ սիրէր զիս Մենտոր , մինչև ընկեր ուղեկից լինել ինձ ի
 ճանապարհորդութեանն իմում յոր յանդգնեալ ձեռնամուխ
 եղէ հակառակ նորա խրատուցն . և Դիք թոյլ ետուն ինձ
 յանցանել զյանցուածս զայս , որ յուղղութիւն ածելոց էր
 զմիտս իմ ամբարտաւանս :

(Խառնոցի յառաջ)

Ս. Գ.



ԹՈՒՂԹ ԱՌ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Յաւելուած ⁽¹⁾

Դարձեալ Մ. Կ. ելանէ ընդ առաջ մեր : Մինչդեռ ակն ունէաք տեսանել ի ճաշակի զստատախանին մեր առ նա , եհաս ի ձեռս մեր երկրորդ մասն յօգուածոյ նորա :

Ձոր ինչ տեսաք յառաջին մասին անդ՝ զնոյն է նշմարել և աստ : Նոյն յանդիմանութիւնք քմազարդք , մոացածինք , պատճառք հաւանութեան նմանիք , անհաստատք , խախտութեալ և ամենեւին սնոտիք : Զիք և ոչ մի բան որ բոլորից յառողջ մտաց և յանշարժ կանոնաց բանաւորութեան . նաև օրինակքն զորս հարկանել կամի համեմատութեամբ ընդ հատածս ինչ թարգմանութեան մերոյ՝ չեն ընտրեալք քաջ քաջ . գոնեա զլաւագոյն հատածս հին թարգմանութեանցն բերէր ի մէջ՝ փոխանակ յոռեաց . յայնժամ և մեք յանձն առնուաք թերեւս խոստովանել զսարտութիւն , և մեծարան եղեալ նմա ասէաք . Ուրախ գուարթ լեր , բարեկամ , աւասիկ յարեալքս զհարեալքս :

Ի վրիպակս բանից և ասացուածոց զոր տեսաք յառաջնում մասին անդ՝ յաւելու վարդապետն մեր և այլեւս սխալանս ընդդէմ դպրութեան . համարի թէ ընդ առաջնոյն և ի վերայ առաջնոյն զնոյն ինչ նշանակեն : Իսկ զվարդապետութիւնն նորա վասն «հէ մասնական , զոր օրինակ՝ աստուածունհի , դիցունհի , տիրունհի , սրբունհի , խսկունհի (?) , այլովքն հանդերձ , մեք ոչ ընդունիմք . և զայն՝ գործ մեր է գիտել :

Առ զայրուցս բարկութեանն ի կիր արկեալ է բարեկամն մեր այլ եւս բան մի որ ոչ է ակադեմական . զայն կրկնել աստ չէ պատշաճ վասն սլարկեշտ ականջաց : Նթէ կամ էր մեզ , կամ լաւ եւս ասացից , հնար էր մեզ լնանել յայն աստիճան , չէր և մեզ դժուարին խաղալ և կատակել ընդ նմա :

Նկեսցուք այժմ ի կրկնութիւն համանշանաց , որ այն-

⁽¹⁾ Տես զթիւ Գ .

չափ նոր և թերեւս խորթ և խուժ երեւի նմա : Չեն ինչ զարմանք եթէ հարազատ և չքեղ պայմանք և բնականորեն գեղ հին Հայ դպրութեան օտար իմն և նոր երեւեսցին որոց պարծինն գիտել զՀայերէն լեզու՝ առանց ճանաչելոյ նշանախեց մի զհնոյն : Այո՛, գիտեն կերպարանս ինչ և կեղծաւորին իմն և ձեւս նման Հայերենի . բայց այն ո՛չ է հայերէն, այլ թոհ և բոհ է և չփոթ և համակ խորթութիւն : Թերեւս ասիցեն ոմանք . Այժմ այդ է հայերէն լեզու . ամենեքեան (այսինք բազումը) զայն արկանեն ի կիր : — Բազմութիւնն չառնէ ինչ . քանզի , որպէս յայտ է , աղբիւրն մի է . յորժամ դէպք ինչ և կամ պայմանք կենաց տան բազմաց երթալ դիմել ի մի աղբիւր որ չէ յստակ , յայտ է թէ ջուրն զոր առնուն անտի՛ պղտոր է յիւրաքանչիւր ամանս :

Բայց մեզ չէ պարտ լինել յուսահատ . բնութիւնն յետ ապականութեան ծնուցանէ զնորութիւն , և յետ մահու զկեանս . նեխութեան զհետ գայ դաւարութիւն . որպէս է տեսանել յարդիւնս երկրի . ծաղիկք և բողբոջք և տերեւք անկեալք նեխեալք յերկրի՝ դարձեալ բուսուցանեն տերեւս և շառաւիղս նոր նոր և դաւար : Նոյն դէպք նշմարին և ի պատմութեան լեզուաց . յորժամ պայմանք բանից և ասացածք տակաւ տակաւ մեկնեալ հեռանան յանշարժական կանոնաց և ի բուն ոգւոյ լեզուին , անդէն առնի նորոգ իմն շարժումն որ միջ վարէ յետս ընդ կրունկն և ածէ ի բուն , հարազատ և ի ճշմարիտ կարգ յօրինուածութեան զբարբառն աղաւաղեալ : Յետ Բօնսարի գայ Մալէրպ : Իսկ վասն կլրկնութեան համանշանաց ասեմք՝ թէ է սա ի բնութենէ լեզուի մերոյ և ի մեծատուն մեծագանձ ճոխութենէ խորհրդոց որ բնածին են ի բոյսս բարուց արեւելեան ազգաց : Զի՞նչ ասիցէ Մ . Կ . , կամ զիմօրդ կարիցէ եպերել վթուրքս որ ասեն կրկնակի . շնո՛ւ չէօհրէլ , իպէլն ո՛ւ իբրս՛ , ճէնկ ո՛ւ ճէպալ , տեր ո՛ւ պէյան , այլովքն հանդերձ :

Թողցուք զայդ ամենայն ի մի կողմն . ունիմք այլ ինչ որ կարեւորագոյն է և արժանի մտադրութեան : Այս երկրորդ մասն հռչակաւոր յօդուածոյն յերկուս բաժանի . մին՝ է փուլն որ զմեզ խայթեաց , և մեւսն որ գրես՝ թէ ա-

ռաւել իմն քան զկէսն է , գովեստ է պակուցիչ շլացուցիչ
Հիւրմիւզեանի և ի դէմն Հիւրմիւզեանի՝ բարբառոյն խան-
գարեւոյ : Այս յայտնի էր յառաջին մասնէ իսկ , որպէս ակ-
նարկեալ էաք ի պատասխանին մերում . քանզի զի՞նչ պէտք
էին այնչափ պնդագոյնս և յամառագոյնս նեղել հալածել
զոմն որ թարգմանեալ իցէ հատածս ինչ թարգմանեալս
յայլոց : Այս երկրորդ մասնս փողոզ իմն և բարձրաճայն ա-
ղաղակաւ անէծս և հալածանս քարոզէ ընդդէմ այնոցիկ որ
ոչ պաշտիցեն զթարգմանիչն աստուածացեալ . զի լսեմք թէ
Աստուած հայկաճանախեան կոչեն զՀիւրմիւզեան՝ արբեալք յիւ-
րեանց սնապարծիկն փառաց : Մեք աստուածարեալ ճանա-
չեմք զծերունին զայն պատկառելի վասն սրբակեաց վարուց
նորա և վասն աստիճանին քահանայութեան , բայց ոչ երբեք
աստուածացեալ :

Այլ ի զուր և վայրապար ծախեմք զբանս մեր . թող-
ցուք զնոսա պաշտել զկուռսն իւրեանց :

Ս. Գ.



Շ Ո Ւ Ն

Ի գլուխ նոցա ⁽¹⁾ սիրունն եւ պիտանին կայ շուն ,
Գողոզն այն այլ համբոյր , զիմագրաւն այլ հըլուն .
Ե՛ւ յառաջնորդել ե՛ւ ի պաշտպանել ազնիւ ,
Հօտին զոր վարէ նա՝ է ճըշմարիտ հովիւ :
Երկին մեր վասն արար զնա . յարբունիս գեղջեայ
Թագաւորաց հովուաց առաջին պաշտօնեայ :
Յածի շըրջի յանտառս , եմէ վայրենանայ .
Ետե՞ս մարդ , մըտանէ ընդ օրինօք նորայ :
Նա եւ հին իմն ազգմամբ զոր պահէ միշտ անյեղ՝
Իւրոց բարեկամաց թըլի գիտել ըզգեղ :
Պահեալ զերախտիս միայն զոր ընկալաւ՝ յուշի ,
Գայ լիզուլ ըզծեռս իմ՝ եւլըս եւ թէ պատծի :
Բազում այն է զի կայ հայի յիս խանդակաթ ,
Գըզուանս յինէն խընդրեն աչք իւր բազմապաղատ :
Հըրմայեմ եւ գայ . սաստեմ , իսկոյն մեկնի .
Կոչեմ , այսրէն դառնայ . տամ նըշան , գայ զիմ կնի :

(1) Առանց մակերայ :

Հեռանա՞մ, զի՛նչ արտօսը . գա՞մ, որպիսի՛ խընդանը .
 Որսորդ առանց շահու , բերէ զորսն առ իս ցանգ .
 Խիստ է յագարակի , մարդասէր՝ առ տընին ,
 Ի վըշտի՛ խնամածու , առաջնորդող կուրին ,
 Եւ ես Եղիկոնի (2) թըշուա՛ռս Բեղիսար (3) ,
 Օր մի թերեւս լիցի շուն աղետիս սատար :
 Քան ըզսա սերտ , ազնիւ գո՞յ այլ տան անասուն ,
 Մեծատուն որ ցանկայր զընել զաղքատի շուն .
 Տըրտմեցաւ այրն , ասէ . « Ի հուսոռութեանս յայսմիկ
 Ո՞ այլ սիրեսցէ զիս , թէ չիցէ այս շընիկ : »
 Ձիբ խնամաց նորա դու , սիրոյ նորա սահման .
 Նա ըզցայգ պահէ զիս , ընդ իս է ի տուընջեան :
 Տեսաւ զի սա ի խռան ապշելոյ ծանուցեալ
 Ջըսպանօղ իւրոյ տեառն՝ ած ի դուրս ձըգձըգեալ .
 Կամ, իբրեւ սէր նորա չկարաց օգնել նըմա ,
 Յամառեալ ի շիրմին վերայ կաց մեռաւ նա :
 Ի մի բան Պիւֆոն մեծն ըզնըմանէ զըրեաց ,
 Հոմեր երգեաց ըզնա . չէ յետնեալ ի փառաց :
 Եւ իբրեւ ի դարձին ի տուն իւր Ողիսեայ
 Առ խընդին քըծնելով մեռանի շուն նորայ ,
 Մռացեալ գՈղիսեւս , զՊենելոպէ , զԵւմէ ,
 Ձերգոյն դիցազն ի նմա ընթեռնիւն տեսանէ :

ՏԷԼԻԼ

Ա. Մ. Գ.

ԱՌԱՆՁԻՆՆ ԲԱՆՔ

Հ Ա Յ Ե Ր Է Ն Հ Ե Ձ Ո Ի Ի

Գ

ԳԱՀԱՎԷԺ ԱՌՆԵԼ . Դերէն՝ Բարձրէն Վար յէլ, նեդէլ : *Գա-
 հալվեժ առնէլին զնոսա ի ծայրից բարձրաւանդակլին : — *Ածին
 զնա մինչեւ յարտեւան լերինն , յորոյ վերայ քաղաքն նոցա
 շինեալ էր , գահալվեժ առնել զնա :

Ի ԳԱՂՈՒԹ ԵԼԱՆԵԼ . Գաղլէլ . Կառնը Կեղը Լեռնալ երևալ :
 *Հատան մնացին դաշտը Իսրայելի , այսինքն ի գաղութ ելին
 ի բնակութենէ գեօղքն :

(2) Եւֆրատ, լեռն է Յոն, նոյնիւն Մոսկովի :

(3) Բեղիսարէս եր Կարաժար Կառ Յոստիէնեան . Կամեռն տէն ի Կարաժարէս
 Կելեր է Կար : — Տեւել եր Կար երեւն զԲեղիսար :

Ի ԳԱՂՏԱԳՈՂՕՆՍ ԱՆԿԱՆԵԼ . Զաղարի հնարք է Զարթ Դնել . Զաթուկ երեսէ լլլալ : * (Տիրիթ) անկանէր ի դաղտագողոնս , մինչ զի զնուն իւր (զՓառանձեմ) տեսանել կարասցէ :

ԳԱԼ ՅԱՃՈՒՄՆ . աճիլ : * Գան (մարդիկ) յաճումն ամուսնութեամբ :

ԳԱԼ Ի ԶԼՁՈՒՄՆ . զլլալ : * Անմեղն հաւատայ ամենայն բանի . իսկ խորագէտն դայ ի զղջումն :

ԳԱԼ ԸՍՏ ՈՒՄԵՔ, ԻՄԻՔ . Դիւն . Դն . Բանի . Դն հեղեւել . հա-
մայցիլ . Դնանիլ . համակարծիք լլլալ : * Իսկ ընդէ՞ր և Աստուած
գայցէ ըստ Սառայի (. . . Կոռուկից լլլալ) — * Նոյնպէս և Գրոց
ըստ մարդկան կարծեաց եկեալ . . . յուշկապարկաց ասեն բնա-
կել յաւերակսն : — * Գիրք ըստ կարծեաց մարդկան եկեալ՝
նոյնպէս անուանեցին :

ԳԱԼ ԶԻՒԻՔ . Բանի . Դն հեղ լլլալ . Բանի . Դն պլլալ : — Մե-
կան . Բանի . Դն սիրով լլլալ : * Եթէ զսոքօք (զհոգեւորօք) գայ-
ցես , և նոցա հասանես : — * Եթէ զառաքինութեամբն գայ-
ցեմք . . . յայնժամ քան զամենեսեան նախանձելի լինիմք : —
* Եթէ զնորա սիրովն գայցես , բազմապատիկ եղիցիս : — * Որ
ոչ գայցէ զտամբ իւրով (Կոռուկ է Դն լլլալ) , նա զհոգմս ժա-
ռանգեսցէ : — * Պահեսցես զամենայն պատուիրանս իմ գալ
զնոքօք : — (Գրէ) վասն արանց զիւրեանց կանամքք գալոյ :

ԳԱՄ՝ ԳԱՄ ԵՒ ՄՈՒՏ ԳՏԱՆԵԼ . Բան . Դնել . Զար լլլալ . Կ-
պից Կոռուկ Զարիլ : * Այնպիսի զօրութիւն ետ մեզ Աստուած ,
որում ոչ ինչ կարէ գամ գտանել չարութիւնն նոցա : — * Ոչ
ինչ կարացին գամ և մուտ գտանել : — * Ոտք խեցգետնոյն
ոչ կարեն գամ գտանել յողորկ և ի սեպ պատեանս զեռ-
նոյն (ոստրէի) :

ԳԱՄ ՔԱՆ ԶԳԱՄ . Կամայ Կամայ . Եղբաւիլ : * Իբրեւ զայն
տեսանէր Փիլիպպոս՝ զի գամ քան զգամ իրք առնն (Մակա-
բեայ) յառաջադէմ աջողէին :

Յ. Գ.

ԻՆԱՄԱԿԱԼՔ ՀԱՆԴԻՍԻՄ

Յ. ԳՈՒՐԳԷՆ Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Ա. Գին միամեայ բաժանորդութեան Հանդիսիս՝ 25 դահեկան ոսկւոյ , հատուցանելի կանխաւ .

Բ. Ծախք թղթատարի ի գաւառս [և "յերկիր օտար՝ դահեկան արծաթոյ 6 ի տարւոջ .

Գ. Զգին բաժանորդութեան , զթուղթ և զամենայն գիր առաքել պարտ է , յանուն խնամակալաց Հանդիսիս , առ Տ. Յովսէփ Գալաֆեան , գրավաճառ ի Կ. Պոլիս , ի Զաքարիաճըլար .

Դ. Զմէն մի օրինակ Հանդիսիս մարթ է ստանալ 3 դահեկանաց առ ամենայն գրավաճառս Կ. Պոլսոյ :

Վ Ա Ճ Ա Ռ Ի

Ե Ր Ի Յ Դ Ա Հ Ե Կ Ա Ն Ա Յ

معارف لطافت جلیله سنک ۹۱۰ نومرولی رخصتنامه سیله طبع اولمشدر
